

ՊԱՏԿԵՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ Վ. ՇՈՒՇԱՆՅԱՆԻ
«ՄԹԻՆ ՊԱՏԱՆՈՒԹՅՈՒՆ» ՎԻՊԱԿՈՒՄ

Վ. Շուշանյանի «Մթին պատանություն» վիպակը եղեռնին հաջորդող ժամանակահատվածում ստեղծված սփյուռքահայ գրականության լավագույն երկերից մեկն է: Այն յուրահատուկ ամբողջություն է կարոտի ու նահանջի և վերադարձի ու որոնման՝ ճակատագրորեն հայերիս վերապահված գրականությունների: Ինչպես նշված ողջ գրականության, այնպես էլ խնդրո առարկա վիպակում գերիշխող է նախաստեղծ մաքրության մի ընդհանուր տրամադրություն, և դա հասկանալի է, քանի որ խոսքն անդառնալիորեն կորած հայրենական տան ու հարազատ եզերքի մասին է, որոնցից դուրս ամեն ինչ օտար է: Կենսագրական այս հրաշալի վիպակի պատանի հերոսի համար հարազատների տունն իսկ օտար է. «օտարի տան մթնոլորտում» նա չի կարող հոգու անդորր գտնել, մինչդեռ «հոգվույն խորը միշտ արթուն էր իր հայրենի տան պատկերը»:¹

Հեղինակը մի վերին շնորհով անընդմեջ վերարտադրում է հայրենի տան անխամրելի պատկերը, որը կրկին տեսնելու համար «արտևանումքները խոնարհելու պետք իսկ չուներ», և ընթերցողը տեսնում է պատկերագրված «լայնատարած թզենին, որ դրացի պատին կհենվեր... Վարը՝ ածուի մը եզերքը ճերմակ շահարակներն կային, որ խունկ ու անմահություն կրուրեին: Առանձին, այդ շահարակները կրավեին ողջ գառունը բուրավետելու համար» (193):

Վերհուշ է և որպես այդպիսին՝ հուզիչ ու գեղեցիկ, իսկ որպես հայրենի տան ու մանկության վերհուշ՝ առավել գեղեցիկ, ուրեմն հասկանալի է «փոքրիկ սրբագրություններով զայն երազին մտեցնելու» հեղինակի ձգտումը:

Այդ «անցյալը ամեն վայրկյան կկոտտար հին վերքի մը պես», սակայն ողջ սերնդի որոնումների և ապագայի ձգտման միակ հուսալի օթևանն էր, որ «հակառակ իր պատճառած վերքերուն՝ ներսեն կլուսավորեր» հանկարծակի որբացած բյուրավոր պատանիների և երիտասարդների, ընդհանրապես ամեն մի վերապրողի:

«Ո՛վ կրնա երբևիցե երկու հայրենի տուն ունենալ» ճարտասանական իր հարցին հեղինակը տալիս է սահմանումի արժեք ունեցող սպառիչ պատասխան. «Մարդուն մը համար մեկ հայրենի տուն գոյություն ունի, ուր կբնակին ողջ սիրելիներն ու սիրելի մեռելները» (193):

Այս գիտակցությունն է ապրեցնում սերնդին, որ «ուր որ ալ ըլլար կտեսներ հեռուն՝ վերադարձի շքեղ աստղը»: Այս դեռատի տղոց ոգևորված բազմությունը, «որ խումբ-խումբ գեղեցկության տաճարին դուռը կը վազե՝ ներս մտնելու անհամբեր»², ցավով հասկանում է. «Ո՛չ, աշխարհը մույն աշխարհը չէր ու վերադարձը հաղթական ոչինչ ուներ և ոչ ոք կրնար իրեն վերադարձնել՝ ինչ որ կորուսյալ էր առհավետ» (243): Մ.Աբրահամյանը, խոսելով 1920-30-ական թվականների սփյուռքահայ արձակի մասին, նշում է, որ «լեզուն բնաշխարհիկ և միակ իմաստային-հոգևոր հանգրվանն է, որով պարզում էր հայ գրողը և՛ պատմական-կիրառական, և՛ հոգևոր արժեքային իր էության «կողմնորոշումը»³: Ընդարձակելով միտքը՝ կարելի է ասել, որ լեզուն իր բնաշխարհից արտաքսված հայության ողջ մնացած բեկորները միահյուսող միակ ատաղձն էր, միակ օթևանը, ազգապահպան գործությունը, ցավերի բալասանը, ի վերջո՝ հայրենի տունը:

Նաև հոգևոր որբությանը տառապող Վ. Շուշանյանի «Մթին պատանություն» վիպակը գեղարվեստական լեզվի անօրինակ գեղեցիկ նմուշ է, այն ունի իրոք շողարձակ մի լեզու՝ նվագուն ու աստղածոր, բայց ներկայացնում է մայրենի լեզուն ու բարբառը՝ իբրև «հիշատակաց երկրի»՝ յաթաղանից չեղծված ու անխորտակ մնացած միակ սյունը, որն այժմ պահպանության ու պաշտպանության է կարոտ:

¹ Վ. Շ ու շ ա ն յ ա ն, «Մթին պատանություն», Եր., 1983, էջ 193: Այսուհետ մեջբերումների էջերը կնշվեն փակագծերով:

² Հ. Մ ի ի ու ն ի, «Նավասարդ» տարեգիրք, Պուրթեշ, Ա.,

³ «Հայոց լեզու և գրականություն», Եր., 2003, 1-2, էջ 35:

Հեղինակ-հերոսը, հիշելով իր և Արուսի գրույցները գրականության հավերժական արժեքների և լեզվի մասին, գրում է. «Մասամբ այս հաճախակի խոսակցություններուն է, որ կպարտին հայերենի ուժեղ կիրքս» (282): Կամ մի՞թե պատահական է օտար բառերի հայերեն տարբերակները, թևավոր խոսքեր, շրջաառույթներ վիպական հորինվածքի մեջ մտցնելը, ընդ որում այդ ամենը «հիշատակների երկրի» կարոտով ապրող երիտասարդների շուրթերին է, ինչպես՝ «Օփերային հարկ է քնարախաղ ըսել, էնթրիկին՝ դիպախաղ, մելոտիին՝ մեղեդի, մաթիներին՝ ցերեկույթ, մաև

- Կավոռշին հայերեն ի՞նչ կըսեն...

- Փարիզյան ստահակ:

Ապա. «Ի՞նչ է Աքիլեսի կրունկը: Ո՞վ է Պրոմեթեոս շղթայալ: Ո՞վ էին Թրուպատուրները» (282-283):

- Քոքեթին ի՞նչ կըսեն հայերեն:

- Կարելի է վայելչասեր թարգմանել, կամ պճնասեր, պչրասեր, պչրոտ (283):

Հայրենական հող ու եզերք կորցրած հայը հոգևոր հայրենիքի սահմաններն է նախանշում, և դրականի ու բացասականի բաժանարարը մայրենի լեզվի հանդեպ վերաբերմունք է: Պատանի Չարեհի սերը Բարկենի հանդեպ իր բացատրությունն ունի. «Չիս սիրելու գլխավոր պատճառներն մեկն ալ՝ իր մանուկ, բայց անընթացելիորեն խորունկ սերն էր դեպի գրականությունն ու հայ լեզուն» (260):

Հայոց լեզվի ոչ արժանավոր ուսուցչի մասին նա խոսում է առանց դույզն համակրանքի «...Այդ հանդիսավոր ավանակը ոչ միայն չէր ջանար մեր քաղցր լեզվին կրակը ձգել մեր արյան մեջ, այլև կհանդգներ ծաղրել մեր բարբախտն սերը» (265):

Ահա թե ինչու «քաղցր լեզվի» ազնվագույն մշակը զարմանալիորեն շքեղ իր պատկերասրահակից ընտրել է բոլորովին ոչ նախանձելի համեմատություն ուսուցչի կերպարն ամբողջացնելու համար. «Երբ հասավ դժվար տողին՝ անմիտ ժպիտ մը կաղամբի պես բացվեցավ մորուքին մեջ...» (265):

Ուշադրություն դարձնենք հակադրությանը. «Թովմաս Թերզյանի մեկ գոհարի պես սիրուն ոտանավորը գրի կառնենք: Այդ ծերունի խրսովիակը կկարդար զայն առանց ջերմության, առանց սիրո...» (265): Մինչդեռ ինքը՝ հեղինակը, ոչ միայն սեր ու ջերմություն է տածում մայրենի բառ ու բանի հանդեպ, այլև նրա անարատության պահպանման մեջ է պատկերացնում հայ հոգու պահպանումը: Իր հերոսուհու լեզվի մասին նա գրում է. «Առանց մասնավոր ճիզի էր, որ կխոսեր այդ ճիշտ հայերենով ու առանց դույզն ցուցամոլության էր մաև, որ հրաժարած էր քաղցի շեշտեն ու կոպիտ ասույթներն: Ու կարծես ձայնն իսկ կհարմարեր իր լեզվին մաքրության ու ջինջ շեշտին» (187): Հասկանալի է, որ սա հեղինակի լեզվական դավանանքն է և վիպակի բնաբուխ, պերճ հայերենը դրա վկայությունն է:

«Մթին պատանություն» վիպակի լեզուն գեղարվեստական լեզվի, այսինքն՝ լեզվաճանկան հնարավորությունների հմուտ գործածության հրաշալի նմուշ է, ճշմարիտ լեզվական արվեստ, որը՝ որպես այդպիսին, նախ և առաջ գեղագիտական արժեք ունի. այն արևագույնի ու լուսներանգի ներթափանցումներով՝ գեղանկարչական, «ծառերի ծափով» և բնության կենդանի շնչառությամբ երաժշտական մշակույթների առնչություններ է բացահայտում:

Հայտնի է, որ գեղարվեստական մտածողությունն իրականացվում է լեզվաճանկան միջոցների և հնարանքների չափավոր ու դիպուկ կիրառությամբ, որը և բնութագրական է քննարկվող վիպակի լեզվի համար: Շուշանյանը զարմանահարույց առատությամբ գործածել է լեզվի պատկերավորության և արտահայտչականության միջոցներ, դրանք շաղ տվել պերճ զարդերի նման, որոնց առատությունը, սակայն, չի հոգնեցնում, չի ծանրաբեռնում խոսքը, ընդհակառակը, այն մոտեցնում է արձակ բանաստեղծության:

Բառի հմուտ, վարպետ գործածությունն արդեն խոսքի բանաստեղծականացում է, իսկ նման գործածության օրինակներ կարելի է շատ վկայակոչել, այսպես՝ հերոսուհու գեղեցկության չափը ներկայացրել է «համբուրելիորեն սիրուն» և «երիտասարդությամբ զվարթ» արտահայտությունների վարպետ բառագործածությամբ (280), կամ աղջկական հուշիկ պատասխանը բնութագրել է «մնջել» բայով, որը տվյալ դեպքում անփոխարինելի է. «Այո՛, մնջեց հագիվ լսելի ձայնով մը» (281), մաև որքան խո-

սուն է «խառնագնաց կհոսեր» կապակցությունը (285) նախադասության գեղարվեստական նպատակադրումն իրականացնելու գործում: Հաճախ Շուշանյանը գեղարվեստական տարբեր հնարանքներ համատեղ է գործածում, կուտակումներ է ստեղծում, և այդպիսով կարծես անհետանում է սահմանագիծը գեղանկարչության, երաժշտության և բանաստեղծական խոսքի միջև: Բերենք օրինակներ. «Որքա՛ն հուզիչ ու անուշ էր այդ երգը իր շրթներուն վրա: Ինձ թվեցավ, թե երջանկութենես պիտի տկարանամ: Ապշահար մտիկ կընեիք զայն ու ինձ կթվեր, թե զարնան խորունկն էի, թե հովը մեղմ ալիքներով կտուրար մարմանդներուն մեջեն, թե զմայելի ծառեր իրենց կատարներով կհամբուրեին իրար: Գուցե զիշեր էր ու կայծոռիկներ պղտուն լույսեր կարձակեին» (281):

Մակդիրների, համեմատության, հակադրության, փոխաբերության համատեղ գործածությամբ հեղինակն ստեղծել է զգացմունքների և վերաբերմունքի ամբողջական համակարգ, որը նաև լավագույնս ծառայում է կերպավորման արվեստին: Այդ մույն գեղարվեստական խնդիրն են լուծում աննախադեպ թարմ, երբեմն անակնկալ մակդիրները, որոնց սուկ թվարկումն անգամ անհնար է: Եթե քաղցր մանկություն, աղու (քաղցր) ձայն, զարնանային դեմք կապակցություններում ընդգծված մակդիրները գեղագիտական արժեք ձեռք են բերում հեղինակի վարպետության շնորհիվ, ապա ինքնին վարպետություն է ներքոհիշյալ մակդիրների գործածությունը՝ սակավիկ մը արև (801), երփներգյան ծաղիկ (305), սանձաբեկ սիրտ (309), հիացիկ ապշություն(310), խարխուլ անձրև (170), ապատամբ մազեր (178), թեթև աճապարանք, տաք դեմք (173), արծաթավառ ծառեր (181) և այլն: Ահա թե որքան թրթռում են աղմկարար, որոտագոռ, զարնան առաջին ավետիսը բերող մակդիրները «հեղեղները» զոյականի համար (295), կամ որբացած պատանիների կյանքը «հին ու շքեղ քաղաքին մեջ» արձակունակ էր, պատանությունը՝ հապաղած (170): Հոգեբանական հրաշալի զուգորդումներ են ստեղծում պղտոր (աշուն - 171), համեստ (տրտմություն - 177), հալածական (տառապանք - 180) մակդիրները, մինչդեռ դույզն մակդիրը «մայրություն» (178) բառի համար խորինաստ գործածություն է, որը բացահայտում է և՛ Բարկենի խոր ցավը, և՛ մեծ մոր կերպարը, և՛ ընդհանրապես մայրական գորովից զրկված պատանիների հոգու տառապանքը: Նման բովանդակություն ունեն անհորիզոն հոգիներ, խոսքան հոգի, փափուկ տրտմություն, անկարելի ժամանակ, անհանդարտ հոգի, կիրակնօրյա պատանեկություն կապակցություններում ընդգծված մակդիրները:

Քանի որ մակդիրը նաև խոսքի հեղինակի վերաբերմունքի դրսևորման լավագույն միջոց է, ապա հետաքրքիր կլինի համեմատել կապակցությունները՝ ըստ այդ հանգամանքի, այսպես՝ վարկածային միամտություն, հանդիսավոր ապուշներ, խոշորաձայն, աղմկարար գոռոզություն և հեղինակավոր ծերություն, հանդարտ ու գորովալի գեղեցկություն, աստվածաճեմ ու աստվածագեղ մարդ, տերունական օր, լուսավորչական ձայն, արքայական ու զվարթ առավոտ կամ ապերասան մանկություն, արեզակի վաչկատան ճառագայթներ, անպատկառ պեխեր և այլն:

Բերված մակդիրները միանգամայն ինքնատիպ են, և դրանցից շատերը (օր.՝ գորեղ կարոտ) հուզահոգեբանական մեծ ներուժ ունեն: Լ. Եզեկյանն իրավացիորեն նկատել է, որ «Նման ինքնատիպ մակդիրների ընտրությամբ արտահայտվում են ոչ միայն հեղինակի կամ որևէ կերպարի ընկալումն ու պատկերացումները կյանքի առանձին երևույթների, իրականության նկատմամբ, այլև ներկայացվում նրանց համապատասխան վերաբերմունքն ու գնահատականն այդ իրողության կամ անձնավորության նկատմամբ տվյալ իրավիճակում»⁴: Ահա բերված կարծիքը հաստատող մեկ դիպուկ օրինակ ևս «...Քանի որ իր մորը աչքերը ուներ, մորը իրիկնային ժամերու գորովով լուսեղինյալ աչքերը» (171):

Վիպակի լեզվում արտահայտչականության տեսակետից անփոխարինելի դեր են կատարում Շուշանյանի կերտած բազմաթիվ և բազմաբնույթ համեմատությունները՝ ամենատարբեր հարիմաստներով: Ըստ ասելիքի, ըստ խոսքի բովանդակության՝ և՛ պարզ են, անմիջական. համեմատվում են հայտնի, ծանոթ, ամենօրյա երևույթներ և՛ առարկաներ, և՛ գեղարվեստական տեսակետից պերճ են, ունեն վսեմ խոսքի այն մակարդակը, որն ընդհանրապես բնութագրական է վերիուշի ու կարոտի հոգեհույզ գրա-

⁴ Լ. Եզեկյան, Հայոց լեզվի ճանաչողություն, Եր., 2003, էջ 337:

կանությանը, մասնավորաբար իրեն՝ Վազգեն Շուշանյանին: Երբեմն ժողովրդական պարզ խոսքի հանգույն կազմում է համեմատություններ «պես» կապով՝ դրա մեջ դնելով, սակայն, կենդանի թրթիռ, բնականություն, օրինակ՝ «Պատերազմը, կերպով մը, անսպառ լուսանցքի մը պես էր, որ կյանքի մի էջ մը կբաժնե մյուս էջին ու մահը՝ երկար բացակայություն մը» (175), կամ «Գյուղին դեռ չմտնեցած՝ ձիերու զվարթ վրճյունը կբախեր դեմքիդ, ցնցելով քեզ, վրադ ձգելով տոթ հուշերու արու ծիծաղը, անսպասա- յին թեթև կապարի մը պես» (173): Ուշադրություն դարձնենք նաև փոխաբերություններին, մակդիրներին, որոնք նույնքան նոր ու քարմ են, որքան և համեմատությունը: Այսպես՝ «Ձեռքերը... կհիշեին սալորենիին բունը՝ որուն կալվվեր խոլ սիրեկանի մը պես» (173): Երբ հարիմաստը փոխվում է, համեմատության եզրերը համապատասխան հնչեղություն են ստանում», «Եթե կըրնար շրթները բանալ, բառերը կըրնային գոռալեն վազել ջրվեժի մը սահանքներուն պես» (178), «Իր հեռավոր երևակայության հորիզոններուն վրա՝ այդ աստվածաճեմ ու աստվածագեղ մարդը, որը օր մը նշմարած էր, անզուգական տեսիլքի մը պես, խորին խորհուրդի մը և հրաշքի մը պես էր» (189):

Որքան վսեմություն կա վերհուշի հերթական գեղումից բերվող հետևյալ համեմատության մեջ «Պատանի աստվածներու պես կննջեին, իրենց ճակատները լուսնկային» (182): Իհարկե, բացարձակ իմաստով նմանություն չկա նկարագրվող երևույթների միջև, սակայն բացառիկ ու անվրեպ ներքնատեսությամբ օժտված գրողը ի հայտ է բերում սովորական աչքի համար անտեսանելի նրբաթելեր:

Ինքնաբուխ ու բարձրարվեստ այս լեզուն ենթադրում է ամենատարբեր կառույցների համեմատություններ: Ահա երկու համեմատություններ, որ տարբեր են կազմությամբ. երկրորդը մի տեսակ ազատ համեմատություն է, որ քնքուշ հուզականություն է հաղորդում խոսքին. «Առաջին անգամ չէր, որ երևակայությունը շեն մտրակի մը պես կտուրար ազատության ճամբաներեն: Ու վերադարձի գաղափարը միշտ հարսանեկան շրջագգեստի փրփուրներուն, ձերմակ ժանյակներուն հետ հեռավոր առնչություն մը ուներ» (170):

Նույնպիսի առանձնահատուկ, այսպես ասած, նկարագրական համեմատությամբ շնորհալի գրողը առնչություններ է ստեղծում արտաքուստ միմյանց հետ չկապված երևույթների միջև. «Տաք դեմքով լակոտ մը կտուլեր սիրո անըմբռնելիորեն տրտում երգը, որուն անարվեստ նիշերուն միջեն, եթե սակավիկ մը ակննջող լարեիր՝ կըրնայիր լսել հավերժական Տիրոջը այգիներուն գովքն ու երգ երգոցի Մուլամիթին արտակեղեք զանգատը», այսպես՝ «Որևէ գյուղ կըրնայիր մտնել, կարծես թե Տիրոջը տունը ըլլար» (173), նաև՝ «...պատարագիչ քահանան, սրբորեն հանդերձյալ կմերձենար խորանին, ինձ կթվեր, թե իրապես Քրիստոս կպատարագեր» (305)

Պարզապես անհնար է ընտրություն կատարել և չենթարկվել մեջբերումների գայթակղությանը, մանավանդ, եթե պետք է մատնանշել կապը ասելիքի և լեզվադրակի միջև: Հաճախ իրար հաջորդող պարբերություններն ասես կապվում են միևնույն այս միջոցի կիրառությամբ, և խոսքը զնալով գեղեցկանում է: Ահա մի օրինակ և՛ «Մեր քաղաքին աղբյուրներուն պես՝ ողջ գիշերը կկարկաչե այդ ծածուկ ձայնը: Մեր քաղաքին պլացիկ ծառերուն պես՝ ողջ գիշերը կսարսռա այդ պատկերը հոգվույս ջրերուն վրա:

Ու ինչո՞ւ միշտ զարնված թռչունի մը պես են, որ արշալույսին երկնքին խորը կուզե իր վերջին գեղգեղանքը արձակել՝ իր շունչը ավանդելե առաջ» (294):

Ս. Մելքոնյանը ճիշտ է բնորոշում փոխաբերության դերը պատկերավորության միջոցների շարքում՝ մասնավորաբար նշելով, որ «գեղարվեստական մտածողության յուրահատկությունը բառական մակարդակում թերևս ուրիշ ոչ մի միջոցով այնքան բնորոշ ու հարուստ արտահայտություն չի կարող ունենալ, որքան փոխաբերության օգտագործումով...»⁵ Եթե հավելենք նաև այն, որ փոխաբերության հիմքում ընկած երևույթների նմանությունը կարող է նաև անձնական վերաբերմունքի արդյունք լինել, այսպես կարելի է ասել, որ հեղինակի գեղարվեստական մտածողության առաջնային ցուցանիշը նաև նրա կերտած փոխաբերություններն են: Վ. Շուշանյանի խոսքի անհատականությունը վկայող հրաշալի փոխաբերություններ կան «Մթին պատանություն» վիպակի լեզվում, որի վերնագրի «մթին» բնորոշումն ինքնին խոսուն և տարողունակ է:

⁵ Ս. Մելքոնյան, *Անհրկներ հայոց լեզվի ռմբարանության, Եր., 1984, էջ 93:*

Տարբեր հարիմաստներով կառուցված փոխաբերությունները շահեկանորեն ինքնատիպ են և այնքան ակնառու արժեք ունեն, որ մեկնությունների կարիք չկա: Ահա մի քանի բնորոշ օրինակ՝ «Արևելքի ճամբաներում վրա, երբ անոթության հետ օրն ի բուն կռվելով կհառաջանար, հովը կլվար դեմքը, արևը կհրկիզեր իր շեն մարմինը և ուր որ ալ ըլլար կտեսներ հեռուն՝ վերադարձի շքեղ աստղը» (173):

«Հիշատակներ, որքան անուշ է ձեր գինին», «Մանուկ մը, որ ամեն առավոտ վերստին գյուտը կընէր երկրի ողջ գեղեցկության: Հիշատակներ, որքան, թեթև է ձեր շղարշը վրաս» (295): «Վասնզի շատ կանուխեն իր արյունը կըբախտեր գարնան քայլերուն հետքերով» (91): «Իր բոլոր շարժումներուն մեջ՝ երկրին ծածուկ բանաստեղծությունը կար», «Գարուն կար նաև Արուսյակի շարժումներուն մեջ, գարուն կար անոր ձեռքերուն վրա» (191) կամ՝ «...վերադարձը կերևեր...հարս ելած խնձորենիի մը տակ», նաև «Օրը լռությամբ կհավաքեր իր փեշերը» (171): «Ամեն ինչ շարականներու ալիքներուն վրայեն կհասներ իրեն» (194):

Ուշադրություն դարձնենք՝ «Քարերն անգամ տաք բռնկումներ ունեին» (161), «Արևի փշուրներ կան իր մազերուն մեջ» (294), կամ «...երկիրը կակներ ծափել» (193), «...մեկեն պատերը կնահանջեին» փոխաբերությունները սեղմ ու կուռ կառուցվածքով ինչպիսի արտահայտչականություն են հաղորդել խոսքին: Շուշանյանի կերտած փոխաբերությունների արժեքը, անշուշտ, առարկաների, երևույթների, նրանց որոշակի հատկանիշների մասնության գեղարվեստական ըմբռնումն է, և նկատելի է համեմատվող երևույթներից մեկի՝ իրենց համար ընդհանուր հատկանիշների և երևույթների՝ մյուսին անցնելը: Ահա այս երևույթի դրսևորումը այլ նրբիմաստի փոխաբերություններում՝ «Կզգար թե դեռ ամիսներ շարունակ այս բոլոր բարի մարդիկը պիտի փորեին իր վերքերը» (180), կամ՝ «Այլ ծածկված այդ դռան ետև, պզտիկ հանցավորի մը պես, դառն հիասթափություն մը մտլտաց» (185): «Մեծ մայրդ կըսես, թե երեսեղ թույն կկաթի» (193): «Չմրան դաժան գիշերներուն, երբ հովը կռռնար դուրսը, խոշտանգելով ծառերը՝ քունի ժամը կընա՞ր միթե հնչել...» (193) և այլն, և այլն:

Բերված թե բառային, թե՛ ծավալուն փոխաբերությունները, միանգամայն նոր են, աննախադեպ, գեղեցիկ: Եվ սրանցով չի ամբողջանում գեղագիտական հնարանքների համակարգը ըննարկվող նյութի սահմաններում: Ներկայացված պատկերավորության միջոցներին իրենց անակնկալ գեղեցկությամբ և գեղարվեստական արժեքով չեն զիջում նաև արտահայտչականության միջոցները՝ հակադրություններ, ճարտասանական դարձույթներ, պատկերավորում, դիմանկար, բնանկար և այլն, որոնք առանձին ուշադրության են արժանի:

ИЗОБРАЗИТЕЛЬНО-ЯЗЫКОВЫЕ СРЕДСТВА В ЯЗЫКЕ ПОВЕСТИ В. ШУШАНЯНА “ТЯЖКАЯ ЮНОСТЬ”

____ Резюме _____

____ М. Хачатрян _____

В повести представлена национально-освободительная роль родного языка в постреволюционный период для всего осиротевшего поколения. Особенно выделяется образ духовной Армении.

Главной особенностью повести является автобиографичность, боль потери родного очага и Родины. Важнейшими стилистическими особенностями повести является точность художественного слова и образность мышления. В статье анализированы различные тропы – эпитеты, сравнения, метафоры, которые являются образными средствами образной речи. Из лексических средств образности определены стилистические функции заимствований.